

ՏԵՍԱԿԱՆ ԵՐԿԻՐՆ ԻՄ ԿԻՆԿԻՎ

Ընդամենը 25 տարի առաջ ֆանտաստիկայի բնագավառ կղիտվեր որևէ մեկի երազանքը՝ լինել Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում: Հայաստանի պատմական այդ տարածքները հիմա Թուրքիայում են՝ առանց հայ բնակիչների ու արդեն կամաց-կամաց անհետացող պատմական հուշարձաններով: Կա՞ հայ պատմաբան, հայ գրականագետ կամ հայ բանասեր, որը զիտի մեր հայրենիքի անցյալն ու չի երազել տեսնել այն վայրերը, որտեղ ապրել ու գործել են մեր ազգի մեծերը: Դժվար է գտնել, որովհետև երկու անգամ Արևմտյան Հայաստան այցելելով, այս անգամ էլ գումարած Կիլիկիան, մեր խմբի կազմում տեսա հայ մտավորականության գրեթե բոլոր խավերին, որոնց համար հայրենի մասունքները հարազատ մարդու պես թանկ են: Հայկական Կիլիկիայի մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Եվրոպական հայագետներից Կիլիկիայի մասին մեծարժեք ուսումնասիրություններ ունեն Վիկտոր Լանգլուան և Էդուարդ Դյուլոփեն, մեր մեծերից Կիլիկիայի մասին գրել են Ղ.Ալիշանը, Ն.Ադունցը, շատերը: Այսօր հրապարակի վրա են այնպիսի գրքեր, ինչպիսիք են վերջին տարիներին լույս տեսած Կլոդ Մուտաֆյանի «Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում»¹ և Գրիգոր Միքայելյանի «Կիլիկիայի հայկական պետության պատմություն»² արժեքավոր հետազոտությունները:

Զմոռանա՞նք մի կարևոր պատմական փաստ. 19-րդ դարի կեսերին Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդի հատուկ աջակցությամբ և ֆրանսիական կառավարության նյութական մեծ ծախսերով երիտասարդ հայագետ Վիկտոր Լանգլուան մեկ տարով (1852-1853) այցելում է Կիլիկիա, հետազոտում հայկական ու հունական պատմական հուշարձանները: Առանձին աշխատություններում նա մանրամասն նկարագրում է իր տեսած բնակավայրերը՝ Կո-

1 Կլոդ Մուտաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, 630 էջ:

2 Գրիգոր Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, 546 էջ:

ոհկոսը, Այասը, Տաքսոնը, Լամբրոնը, Ադաման, Սիսը և այլ վայրեր: 1855-ին Վ.Լանգլուան հրատարակում է "Voyage a Sis, capitale de l'Arménie au moyen age" կարևոր գործը (Paris, 1855), որում հայազետը ներկայացնում է <այաստանի մայրաքաղաքի՝ Սիսի կարևոր շինությունները և այդ ամենն այնքան կենդանի ձևով, կարծես թե դու էլ՝ նրա հետ քայլում ես արծվաբույն հիշեցնող մայրաքաղաքի փողոցներով ու մտնում հիմնավոր շինություններից ներս: Դեռ իր ժամփորդական զեկույցներում Վ.Լանգլուան ահազանգում էր Նապոլեոն Երրորդին հայկական հուշարձանների՝ թուրքերի կողմից անխնա ոչնչացվելու փաստի մասին: Վիկտոր Լանգլուայի այցելություններից հետո անցել է մեկուկես դարից էլ ավելի ու ընդամենը 9 հայ կին, տարբեր մասնագիտությունների, տեր, այցելում են Կիլիկիա: Ուղևորության ծրագիրը «Անի-տուր» տուրիստական հիմնարկության ղեկավարը՝ Վոլոդյա Առուշանյանը, կազմել է շատ գիտակ ձևով: Մենք հնարավորություն ունեցանք լինելու բոլոր այն վայրերում, որոնք ոչ միայն եղել են Կիլիկյան հայկական թագավորության կազմում, այլև կապված են Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու և ուրիշ մեծերի անվան հետ: Մենք տեսնում ենք Եղեսիան կամ Ուռհան, որն այսօր կոչվում է Սանլիուրֆա: Քաղաքը գեղեցիկ է, ժամանակակից բազմազույն բարձրահարկերով լեցուն, ունի կանաչ պուրակներ ու զրոսայգիներ: Քաղաքն ուներ հայկական թաղամաս, որտեղ, բնականաբար, հիմա հայեր չեն ապրում: Քաղաքն ունի քրիստոնեական սրբավայրեր, որոնք որպես թանգարաններ խնամված վիճակում են: Այնտեղ տեսանք սրբազան ձկների ավազանը, Աբրահամի քարանձավը, Հոր Երանելու տանջարանը և Ուրֆայի բերդը: Եղեսիա մեկնելու ժամապարհը, սկսած Բիթլիսից, խիստ ուշագրավ է: Նախ Բիթլիսը, որը նախքան 1915 թվականը, բացառապես հայաբնակ էր, պահպանել էր բավականին թվով հայկական շենքեր, որոնք լքված են, սակայն կանգուն: Բիթլիսից դեպի Տիգրանակերտ, ապա Ամիդ (Դիարբեքիր) մեկնելիս մեր մեքենան անցնում է հռչակավոր Բաթմանա կամրջի մոտով: Կամուրջն արաբական շրջանի կառույց է՝ ձգված Եփրատի վրա: Այն հիշատակվում է «Սասնա ծռեր» էպոսում: Հենց այդ կամրջի վրա է Սասունցի Դավիթն իրեն ուղեկցող Մըսրա Մելիքի ծառաներից իմանում Մելիքի նենգ նախադասի մասին՝ վերջիններիս կախելով կամրջի երկու կողմերից: Ուրֆայի ճանապարհին է Տիգրանակերտը՝ Տիգրան Մեծի ժամանակներից մնացած ավերակ կառույցներով, որոնցից մեկի հսկայական պատը ճարտարապետական կատարելություն է: Հեռվից դիտում ենք նաև Տիգրան Մեծի ամառանոցային միջնաբերդը՝ լեռան բարձրության վրա: Եղեսիայի ճանապարհին կարևոր կանգառ է նաև Նեմրուք լեռան հեթանոսական սրբատեղին այցելելը: Այստեղ են գտնվում հայ Երվանդունիների արքայական դամբարանը և հեթանոս աստվածների հսկայական քանդակները: Այդ քանդակների մի մասի

գլխի բարձրությունը հասնում է մինչև 8 մ: Արձանները տեղադրված են լեռան կատարի երկու կողմերում: Կատար հասնելու համար հաղթահարում են ժայռեղեն կես կիլոմետրից էլ ավելի դժվարագնա ճանապարհը: Բրիտանական թանգարանում «Նեմրուք դադ» անունով առանձին մեծ սրահ կա, ուր դրված են Բելի ու հին աստվածների արձանների վիթխարի գլուխներ՝ բերված հենց այստեղից: Դրանք իրենց բնական տեղում տեսնելը մի եզակի հաճույք է, և դիտողն իսկույն մոռանում է դեպի լեռան գագաթը տանող ճանապարհի դժվարությունները: Ամիդը, որ ներկա Դիարբեքիրն է, մեծ քաղաք է, և հենց նրա կենտրոնով 8 կմ երկարությամբ ձգվում է շատ հին մի պարիսպ, որը ներգործում է դիտողի վրա իր դիտակետերով ու դարպասներով: Դիարբեքիրի խորհրդանիշը ձմերուկն է, և քաղաքը հատուկ քանդակ ունի նվիրված ձմերուկին: Երբեմնի հայկական շրջաններում ևս թուրքերը արձաններ են կանգնեցրել՝ նվիրված այն պտուղներին, որոնք բնորոշ են այդ տեղանքին: Արձաններ են նվիրված ծիրանին, խաղողին, պիստակին, կիտրոնին և այլն: Մալաթիայում, օրինակ, կանգնեցված է ծիրանի արձանը: Մարաշն ընդհանրապես գեղատեսիլ քաղաք է և ունի առատ բուսականություն:

Դեպի Կիլիկիա կատարած ուղևորության ամենամոռանալի դրվագներից մեկը Մուսա լեռան գյուղերի այցելությունն է: Մեզ համար հաճելի անակնկալ էր, որ այդ գյուղերից մեկը հայաբնակ է: Ով կարդացել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» հիասքանչ վեպը, կհիշի, որ այդ գյուղերը շատ փարթամ բնություն ունեին: Մուսա լեռան հայաբնակ վազը՝ գյուղը թվում է հենց Աստծու դրախտն է: Գյուղն ամբողջովին կանաչի մեջ է, ու մրգերով ծանրաբեռ ծառերը և բազմագույն ծաղկունքի մեջ կորած թփերը հիացնում են պատճառում: Ինչ ասես այնտեղ չի աճում՝ բամբակ, մարինջ, կիտրոն, մանդարին, ծիրան, թուզ, տանձ, խնձոր, սալոր և այլն: Կանգ ենք առնում մորակառույց հայկական եկեղեցու բակում, ուր անմիջապես հայտնվում են երեք տարեց հայուհիներ, ընտիր արևմտահայերենով ողջունում մեզ ու փաթաթվում: Հետո բոլորս մտնում ենք կոկիկ ու գեղեցիկ եկեղեցին ու այդ կանանց հետ միասին «Հայր մեր» արտասանում: Չգիտես որտեղից հայտնվում է մի շատ համակրելի երիտասարդ երևանից ու ասում, թե ինքն ընտանիքով հանգստանում է աստվածային այդ դրախտում: Ցավալի է միայն, որ կանայք խոստովանում են, թե իրենց թոռնիկներն այլևս հայերեն չգիտեն: Այցելում ենք Մուսա լեռան մեկ ավելի մարդաշատ թուրքաբնակ գյուղ, որտեղ դեռևս կանգուն է 5000 տարեկան մի սոսի ծառ ու նկարվում ենք այդ վիթխարի ծառի փչակում: Մուսա լեռան գյուղերը հարուստ են նաև անուշահամ աղբյուրներով:

Այնուհետև, մեր 9 կանանցից բաղկացած խումբն ուղևորվում է Կոռնիկոս՝ այսինքն՝ Միջերկրական ծով: Սա այն սահմանն է, որը կա մեր պատմական տարեգրություններում: Ամեն հայի հիշողության մեջ կա ծովից ծով Հայաս-

տան, Կառապից ծովից մինչև Միջերկրական ծով ձգվում էին արքայից արքա Տիգրան Մեծի տերության պետական սահմանները: Հետագայում Կոռիկոսը դարձավ Կիլիկյան հայկական պետության կարևոր բերդերից մեկը: Բերդը ծովի մեջ է՝ ափից ոչ հեռու: Նավով մեկնում ենք ծովային Կոռիկոս, որն իր պատերի վրա ունի հայկական արձանագրություններ: Հսկա այդ ամրոցը մեր նախնիների օրերին ապրել է քաղաքակիրթ կյանքով: Նրանում կան մոզայիկ հատակ ունեցող բաղնիքների ու ջրավազանների հետքեր: Կոռիկոսում մնում ենք 3 օր և առավոտյան ու երեկոյան, երբ էքսկուրսիաներ չկան, լողանում ենք Միջերկրականի համդարտ ջրերում ու զարմացած դիտում որոշ թրքուհիների, որոնք լողանում են վերարկուով, շալվարով ու գլխաշորով: Կոռիկոսից հետո մեր խումբը ծանոթացավ նաև Ալեքսանդրետ, Տարսոն, Ադամա քաղաքներին: Տարսոնում այցելում ենք Պոդոս առաքյալի տուն-թանգարան, խմում այն սուրբ շրիտի ջրից, որից խմել է առաքյալը և դիտում հին թաղամասերը, որոնք ֆրանսիական ժառտարապետության կնիքն ունեն: Շատ հետաքրքիր էին Կոռիկոսի ցամաքային տարածքում եղած հին հունական ու հռոմեական շինությունները, նրանցից մեկը՝ հսկա ամֆիթատրոնով, Ապոլոնի տաճարը, Դժոխքն ու Դրախտը: Դրախտ իջնելը շատ դժվար է, անհրաժեշտ է հաղթահարել դեպի խոր ճորը տանող 455 անկանոն աստիճանները: Որքան էլ տարօրինակ է, սակայն Դրախտը գետնի տակ է: Նրա դռների մոտ կանգուն են Աստվածամոր տաճարի ավերակները, որոնք մասնագետների կարծիքով կառուցվել են 5-6-րդ դարերում, բնականաբար, Քրիստոսի ծննդից հետո: Դրախտ մտնում է միայն մի կին՝ բժշկուհի Էմման, մնացած Ց կանայք կանգ են առնում Դրախտի մուտքի տարբեր մասերում: Էմման ասում է, որ ինքն իրեն Դրախտում շատ լավ էր զգում, այնտեղ վառվում էին լույսեր, որոնք աղոտ լուսավորում են քարանձավը: Դրախտին ու Դժոխքին շատ մոտիկ է ստորգետնյա քարանձավը, ուր իջնելու համար հաղթահարում ես պտուտակաձև բազմաթիվ աստիճաններ: Աշխարհում շատ կան այդպիսի ստորգետնյա քարանձավներ: Ես դրանք տեսել եմ Գերմանիայում, Կուբայում, Լիբանանում, սակայն այս քարանձավն առանձնանում է իր բուժիչ հատկությամբ: Իրոք, երբ դուրս ես գալիս ստորգետնյա այդ խորշից, զգում ես, որ ավելի հեշտ ես շնչում:

Կիլիկիայում է գտնվում նաև Սելևկյանների կառուցած բերդերից մեկը: Ազգությամբ թուրք, անգլերենով խոսող բացատրողը մեր ուշադրությունը հրավիրում է բերդի շինությունների պատերին եղած հայերեն արձանագրությունների վրա: Նա ասում է, որ հայերն այդտեղ թաղել են մեծ թվով ոսկով լիքը կարասներ, որոնք ցեղասպանությունից հետո գտել են թուրքերը: Վեց թուրք ընտանիքներ այդ ոսկիները յուրացրել և հարստացել են:

Ինձ համար մի առանձին կարևորություն ուներ Միս մայրաքաղաքը դիտելը: Լեռան բարձրության վրա երևում են հայկական Սսի հսկա պարիսպները,

սակայն չենք բարձրանում միջնաբերդ, այլ այն դիտում ենք մերձկից: Վոլոդյա Առուշանյանը փոքրիկ խորտկարանի տիրոջն ասում է, թե մենք, այսինքն՝ 9 կանայք, Ռուբինյան արքայական գերդաստանի շառավիղներից ենք ու եկել ենք մեր թագավորական քաղաքը: Այս լուրն ընդունվում է ջերմությամբ և մեզ սիրով ու արագ կերակրում են:

Սիս քաղաքի բնությունը նույնպես փարթամ է: Պատմական Հայաստանի Կիլիկյան մասում լիքն են քաղցրահամ և գեղեցիկ լճերը, որոնց վրա լաստանավերով մի քանի անգամ տեղից տեղ ենք գնում՝ լաստանավի վրա բարձրացնելով նաև մեր ավտոբուսը: Բնության գեղատեսիլ մի անկյունում է գտնվում Հռոմկլայի բերդը, որտեղ եղել է հայոց կաթողիկոսարանը: Եփրատն այդ մասում ունի բիլ կապույտ գույն, իսկ բերդն, իրոք, վեհաշուք է և անառիկ:

Բարեբախտաբար մեր ուղևորության ծրագրում էր նաև երկու օրով Հալեպ այցելելը: Հալեպը մենք տպավորություն է թողնում արևելյան տիպիկ կուլտրիտով: Հայերը Հալեպում շատ երջանիկ տեսք ունեն, իսկ արաբները մեզ հետ անկեղծ ու ջերմ էին: Հալեպում տեսնում ենք 5 կմ երկարությամբ ձգվող Հալեպի նշանավոր վիթխարի բերդը, որն, ի դեպ, ժամանակին գրավել էր Տիգրան Մեծը: Այցելում ենք գլխավոր հայկական եկեղեցի ու մեզ զգում հայրենիքում: Ցնցող տպավորություն է թողնում Մեդինան-շուկան ու մեզ թվում է, թե ընկել ենք միջնադար: Խմբի գիղը՝ Վարդանը, հմուտ է արաբերենի մեջ և անգիր գիտի Հալեպը: Նրան մենք անվանում ենք «товарищ Сухов», որովհետև նա պատասխանատու է 9 հայ կանանց համար, որոնց շարունակ հաշվում է ու ամեն անգամ հարցնում. «Անձնագրերը հո չե՞ք կորցրել»: Հալեպը մեր խմբից ե՞րբ-ի պրոֆեսոր Սոնա Սեֆերյանի ծննդավայրն է, և նա իր ընկերուհու՝ իսպաներենի դասախոս Աղավնի Ակիմյանի հետ գնում է իր արձատները փնտրելու: Մեր խմբի մեջ են նաև երկու երիտասարդ աղջիկներ, դեռևս չամուսնացած բժշկուհի Լիլիթը և արդեն իր 13-ամյա աղջկա ապագայի մտահոգությամբ ապրող Հասմիկը: Ես, քույրս՝ մեխանիկ-ինժեներ Սուսաննան, և քիմիկոս Ֆլորան, երկրորդ անգամ ենք մեկնում Արևմտյան Հայաստան: Եվ պետք է խոստովանեմ, որ մանկական աշխուժությունն ու սրամտությունը պահպանած Ֆլորան մեր ուղևորությանը մենք աշխուժություն է հաղորդում: Փիլիսոփայության և արվեստագիտության մեջ հմտացած Անահիտն ամեն ինչին նայում է իր մասնագիտական հայացքով:

Հալեպից 70 կմ հեռավորության վրա է գտնվում քրիստոնեական կրոնի վերաբերող եզակի մի կառույց՝ «Սեն-Սիմոնը»: Ինչպես երևում է վանական համալիրի հսկա ծավալներից, այն ժամանակին եղել է նշանավոր ուխտատեղի ու գտնվել է ծաղկուն վիճակում: Մոսկվայում սովորած արաբ գիղը սխալաշատ, սակայն իր համար վարժ ռուսերենով բացատրում է Սեն Սիմոնի ով լինելը: Սրբի կյանքը շատ նման է Քրիստոսին նվիրված հայտնի նահատակների կյան-

քի ընթացքին: Այդ սուրբը հատուկ պարաններով կապել է իր ստամոքսը, որ-
պեսզի ուտելու ցանկություն չունենա: Նրա հոշակն այնպես է տարածվել ամե-
նուր, որ ուներ համակիրների ու հետմորդների վիթխարի բանակ: Համալիրի
կենտրոնում կան միմյանց վրա դրված երկու հսկա քարեր, որոնք կապվում են
սրբի անվան հետ: «ԱՍՆ-Սիմոնը» ժարտարապետական հետաքրքիր լուծում-
ներ ունի. այն զարմանալիորեն մման է մեր երեքուքի տաճարին:

Անցնելով հարբերդը, Մալաթիան՝ կանգ ենք առնում պատմական Ծովք
լճի ափի գեղատեսիլ հանգստավայրում՝ հաշորդ օրը Մուշ մեկնելու համար:
Մուշում՝ երեկոյան խնջույք է կենտրոնական այգու ռեստորանում, ուր 9 կա-
նանց միանում են Վանից եկող 50 հոգանոց խումբը, որոնք՝ երևանից, Ռու-
սաստանից, Ֆրանսիայից ու այլ վայրերից էին: Խնջույքից հետո ինձ է մոտե-
նում 17-18 տարեկան մի համակրելի երիտասարդ ու հայերենով հարցնում.
«Մուշը հավանեցի՞ք»: Պարզվում է երիտասարդը մշեցի հայ է, շուտով մեզ
մոտենում է նրա հայրը, որն ավելի քրդական արտաքին ուներ և ասում է, թե
Մուշում 150 հայ ընտանիքներ են ապրում: Ի դեպ, Մուշում «Արմինե» խանութ
կար, իսկ գլխավոր հանրախանութում հայերենով լսվում էր գուսան Աշոտի
հիանալի երգերից մեկի ընտիր կատարումը:

Մեր ուղևորության վերջին կետը Աճին էր, որն այս անգամ ավելի վիրա-
վոր թվաց: Հրաշք կաթողիկե եկեղեցու մի պատի փոքրիկ բացվածքը քանդել
էին և առաջացրել հսկա խոռոչ: Փոխել էին բոլոր ավերակների ցուցանակնե-
րը, և նրանցից որևէ մեկում հայկական մայրաքաղաքի, հայերի հետ կապված
լինելու ոչ մի ակնարկ: Տիգրան Հոնենցի եկեղեցին, օրինակ, վերագրվում էր
վրացիներին ու նրա պատերի հարթաքանդակները համարվում էին թուրքա-
կան օրացույցից վերցրած պատկերներ: Սա մեծ դաժնություն պատճառեց
բոլորիս: Ես այս փաստի մասին անմիջապես հայտնեցի անփազետ Կարեն
Մաթևոսյանին ու ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանին:

Աճիի այսպիսի վիճակը մտածել է տալիս, որ թուրքական պատմագիտութ-
յունը թքած ունի գիտական փաստերի վրա: Սա զարմանալի չէ. տարիներ
առաջ Օզալը՝ Թուրքիայի պետության առաջին ղեմը, որն ի դեպ ավար-
տել էր Հարվարդի համալսարանը, ի լուր աշխարհի հայտարարեց, թե Տրո-
յան եղել է բարձր քաղաքակրթությամբ թուրքական քաղաք, և այն կործանել
են հույները: Մինչդեռ, երբ բացում ենք ֆրանսիական հանրագիտարաննե-
րը՝ "Larousse"-ը, "Robert"-ը¹, պարզ կարդում ենք, որ թուրքերը Փոքր Ասիա-
յում և պատմական Հայաստանում հաստատվել են ընդամենը 11-րդ դարում
Բ.Ծ.Հ.: Նրանք քոչվոր ցեղեր էին, և առաջինը պատմական Հայաստան են
մտել թուրք-սելջուկները, որոնք եկել են Միջին Ասիայից:

1 Petit Robert 2. Paris, 1988, p.1604

Անիի, որպես Հայաստանի մայրաքաղաքի մասին արժեքավոր տեղեկություններ ունի Նիկողայոս Մառը¹: Վերջինս Անիի պեղողն ու ամենամշակավոր հետազոտողն է: Ն.Մառն իրեն համարում էր վրացի (մայրը վրացուհի էր), սակայն երբեք Անին վրացական քաղաք չի համարել: Ֆրանսիացի նշանավոր հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն Անիին նվիրել է 2 հատորանոց հետազոտություն, որն անիագիտության առաջին լուրջ հանրագումարն է²: Անիի մասին մեծարժեք հետազոտություն ունի Խ.Աբովյանի ժամանակակից Աբիխը՝ գերմանացի երկրաբան, հայագետ, որը հիացմունքով է խոսել Անիի հայկական ծարտարապետության մասին, իսկ Անիի մայր տաճարը համարել է իր ստեղծման դարի համաքրիստոնեական ծարտարապետության գլուխգործոցը: Չարմանալ կարելի է, թե ինչու թուրքական պատմագիտությունը անտեսում է օտարագգի նշանավոր այս գիտնականների վկայությունները, մոռանում նրանց գրքերում տպագրված Անիի շինությունների հայերեն բազմաթիվ արձանագրությունները: Ես գիտակցաբար չեմ հիշատակում հայ պատմիչների վկայությունները, որոնց մի մասը ականատեսների կողմից է գրվել և վկայում են Անիի՝ Հայաստանի մայրաքաղաքի «տիեզերահռչակ» լինելու փաստը:

Ուզում եմ մի դրվագ պատմել Անիի վերջին այցելությունից: Մեր խմբի կանանցից մեկը Անիի պարիսպների մոտ կռացավ ու կաքավի ձվի մեծությամբ մի քար վերցրեց՝ իբրև հիշատակ: Թուրք հսկիչը շտապ մոտեցավ ու նրա ձեռքից վերցրեց քարը՝ ասելով, թե այն իրենց ազգային արժեքն է: Երբ գիղը բացատրեց, թե քարը ծարտարապետական բեկոր չէ, այլ գետնի սովորական քար, հսկիչը մնաց անդդովելի: Երբ ավտոբուսը շարժվեց, հսկիչը մոտեցավ ու գիղին մեկնեց շինարարական ցեմենտ-բետոնե մի փոքրիկ կտոր և ասաց, թե այն կարելի է տանել: Վիրավորված գիղը ավտոբուսի պատուհանից դուրս շարտեց բետոնի այդ կտորը՝ ոչինչ չասելով:

Կարս քաղաքի բարձունքում կանգնած է մոդեռն ոճով հսկա մի արձան, մարդկային երկու ֆիգուրներ, իրար կպած խորհրդանշում են հայ և թուրք ժողովուրդների բարեկամությունն ու բարիդրացիությունը: Արձանը պետք է դրվեր հայ-թուրքական սահմանի վրա, եթե այն բացվեր... Մեր պատմական հայրենիքը տեսնելու համար 2,5 ժամի փոխարեն հայը Վրաստանով անցնում է 12 ժամ տևող հոգնեցնող ժանապարհը, որ Երևանից հասնի Անի կամ Կարս:

Արևմտահայաստանը անհրաժեշտ է տեսնել, որքան էլ ծանր է կորստի

1 Н.Марр, Ани, Книжная история города и раскопки на месте городища, Л-М, 1934, Ани, столица древней Армении /Историко-археологический набросок/ տե՛ս Марр Н., Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн I, СПб, 1900, с. 197-222.

2 Sté M.Brosset, Les ruines d'Ani, capitale de l'Arménie, sous les rois Bagratides, aux X^e at XI^e s., histoire et description, I^{re} partie, SpB, 1860, II^e partie, 1861.

ցանկը: Մինչե հնարավոր է «Սասնա ծռեր» հանձարեղ էպոսի մասին ճշգրիտ պատկերացում ունենալ, առանց տեսնելու Վանա ծովը, Բաթմանա կամուրջը, Մարութա սարը, և վերջապես, Միեթի դուռը: Միեթի դուռը եզակի երևույթ է, քարե կոկիկ այդ դուռը միատիկ խորհուրդ ունի: Այն կապում է իրական ու անդրաշխարհային կյանքերը միմյանց: Միեթի դռան խորհուրդը դեռ լիովին պարզված չէ, և այն, անշուշտ, ունի հազվագյուտ զաղտմիքներ: Նեմրուք լեռան կատարին կա մի կապուտակ լճակ, ու նրա հետ կապված է ժողովրդական հետաքրքիր ավանդություն, որը մեզ է պատմում հայ բանագիտության մեծ երախտավորը՝ Գարեգին Սրվանձտյանցը: Ըստ այդ ավանդության, հենց այդ վայրում է մեր նախնի Հայկը հաղթել բռնակալ Բելին, նրա դին բարձրացրել Նեմրուք լեռան գագաթն ու այրել թոնրի մեջ: Աստծու հրամանով կրակը ջուր է դարձել, ու Բելի մոխիրն անցել է ջրի տակ, որպեսզի չարի մնացորդները չտարածվեն Հայոց աշխարհում:

Այս ամենը տեսնելով՝ Բելի ուղտերը և ուղտապանները վախից քարացել են: Այսօր էլ կան այդ ուղտերն ու ուղտապանները՝ որպես քարեր:

Բացի Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցուց, որը վերականգնված է՝ առանց խաչի, Կտուց կղզու վրա պահպանվել է հայկական եկեղեցին և այն էլ բավականին լավ վիճակում: Ամայի այդ կղզին, իրոք, թռչունի կտուցի ձև ունի: Կղզին պատված է նշենիներով, իսկ կանգուն եկեղեցու շուրջ լի են սպիտակ շիրմաքարերը, որոնց առատությունը վկայում է միաբանության բազմամարդ լինելու փաստը: Բավականին լավ պահպանված է նաև Վարագա վանքը: Ինչ-որ քուրդ ընտանիք Վ.Առուշանյանի ու հայ ուխտավորների թողած դրամական օգնությամբ հետևում է վանքին՝ փակ պահելով նրա դուռը: Ուղղակի փշաքաղվում ես, երբ գիտակցում ես, որ այս վանքի դպրոցում դասավանդել են հայազգի այնպիսի մեծեր, ինչպիսիք են Րաֆֆին ու Խրիմյան Հայրիկը:

Բոլոր դեպքերում, որքան էլ անդառնալի են մեր պատմական կորուստները, ղժվար է դրանք գիտակցելը, սակայն հատկապես հայագիտությամբ զբաղվող մասնագետի համար պատմական Հայաստան և Կիլիկիա այցելելը կենսականորեն անհրաժեշտ է:

ՀԳ.- Թուրքիայում հրատարակված այսօրվա տուրիստական քարտեզում ՀՀ տարածքի վրա թուրքերենով և անգլերենով գրված է՝ հայեր, իսկ Վրաստանն ու Ադրբեջանը ներկայացված են որպես պետություններ: Սա տեղեկատվություն է մտածելու համար: